Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի «Շահումյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթներ հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար.

1. Տնօրենի տեղակալ ուսումնական գծով՝ մեթոդիստ՝ 0. 25 դրույքային միավոր
2. Հատուկ մանկավարժ՝ 0. 5 դրույքային միավոր

Մրցույթներն անցկացվելու են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կազմած հարցաշարով: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մեթոդիստի՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալի որակավորման պահանջները՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Հատուկ մանկավարժի որակավորման պահանջները՝ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ:

Դիմող քաղաքացիները «Շահումյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. ապրիլի 18-ից մայիսի 19-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից 17:00-ն:

Մեթոդիստի մրցույթը կկայանա 2026 թվականի մայիսի 20-ին, ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնում /հասցե՝ ք. Էջմիածին, Մ. Մաշտոց 0/:

Հատուկ մանկավարժի մրցույթը կկայանա 2026 թվականի մայիսի 20-ին, ժամը 14:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնում /հասցե՝ ք. Էջմիածին, Մ. Մաշտոց 0/:

Տեղեկությունների համար զանգահարել 077 20 01 77 հեռախոսահամարով:

Հասցե՝ գ.Շահումյան Լ.Նավասարդյան 13/1
Էլ. հասցե՝ shahumyani.mankaprtez22@gmail.com